«Ա.Չ.Ա.». Անցնող ամիսներուն այցելեցիք Արցախ՝ իբրեւ խմբավար Շուշիի «Վարանդա» մանկապատանեկան եւ երիտասարդական երգչախումբին: Ի՞նչպէս կ'ամփոփէք «Վարանդա»ի այս ամրան գործունեութիւնը:

ԶԱՔԱՐ ԲԵՇԻՇԵԱՆ. Աւանդութիւնը տասնմէկերորդ տարին ըլլալով շարունակուեցաւ՝ եւ ուրախ եմ ըսելու, որ այս տարի եւս Շուշիի «Վարանդա» մանկական, պատանեկան եւ երիտասարդական երգչախումբին հետ ունեցայ երաժշտական ամառ մը: Երգերը փոփոխուեցան եւ մնացեալ ամէն ինչը մնաց յոյժը: Ամրան արձակուրդի մէկուկէս ամսուան ընթացքին «Վարանդա»ն պատրաստեց եւ իրագործեց համերգային հսկայ ծրագիր մը, որ ամբողջութեամբ կը բաղկա-



«Վարանդա»ն՝ Շուշիի իր ելոյթին աւարտին

ղած նպատակս առաջին հերթին երաժշտական բացարձակ որակ նուաճելն է այնքան, որքան հասնիլ Շուշիի մէջ դժուար պայմաններու մէջ ապրող փոքրերուն եւ երիտասարդներուն երաժշտական եւ, ընդհանրապէս, գեղագիտական դաստիարակութեան:

«Ա.». Ի՞նչ բանի կը վերագրէք փորձերու կարճ ժամանակի մէջ «Վարանդա»ի ձեռք բերած մակարդակը:

Զ. Բ. Երկու երեւոյթներ կան, որոնք Լիբանանի մէջ արգելք կը դառնան այդքան կարճ ժամանակի մէջ նման մակարդակի նուաճման: Առաջինը օդի ապականոնն է, որ Արցախի մէջ բացարձակապէս չկայ, եւ՝ աղմուկը: Հոս աղմուկաբար միջավայր է, հոն՝ ոչ: Այս երկուքը կը նպաստեն, որ Շուշիի մէջ ձայները աւելի զրնդուն ու զիլ ըլլան: Անկէ գտաւ, Շուշիի մէջ օրական քանի մը ժամ փորձ կ'ընենք: Այլ զբաղումներ, շեղումներ, ինչպէս՝ համացանց, շարժապատկեր եւ ժամանցի այլ վայրեր չկան: Եւ ի հարկէ այս մէկը կը նպաստէ, որ անդամները կեդրոնանան փորձին վրայ, եւ անոնց հոգին ամրանայ, գարգանայ եւ ստեղծագործական աւելի լայն թուիչներու առիթ տայ:

«Ա.». «Վարանդա» որեւէ ձեռքով ճշե՞ց Արամ Խաչատուրեանի ծննդեան հարիւրամեակը:

Զ. Բ. Այս տարի Արցախի մէջ «Վարանդա»ին վիճակուեցաւ նշել Արամ Խաչատուրեանի ծննդեան հարիւրամեակը: Մեր պաշտօնական համերգը նուիրուեցաւ այս պանծալի հարիւրամեակին, եւ երգչախումբին շուրջ 130 անդամները յայտարարին աւարտին մեկնարանեցին Խաչատուրեանի «Կենաց երգ»ը եւ «Գարուն Երեւան»ը:

Այստեղ կ'ուզեմ նշել, որ տօնեցինք հարիւրամեակը նաեւ լուսանկարի մը: Համացանցի էջերէն մեզի հասաւ Գրիգոր Սիւնիի յեկավարած Շուշիի համանուն երգչախումբին յայտարարութիւն՝ նկարուած հարիւր տարի առաջ: Կը հաւատամ, որ «Վարանդա»ի այսօրուան անդամները կը ըլին այդ համանուն լուսանկարին մէջ պատկերուած երգչախումբին ոգիին, էութեանն եւ ձեռքով մը շարունակութիւնն են «Շուշի» երգչախումբին:

«Ա.». Երգչախումբային փորձերու եւ ելոյթներու պատրաստութեան կողքին, «Վարանդա» այլ գործունեութիւն ունի:

Զ. Բ. Երգչախումբային փորձերու կողքին, «Վարանդա» կը կատարէ նաեւ պտույտներ: Այս տարի անոր երիտասարդական բաժինը կատարեց ուխտագնացութիւն մը՝ ղէպի Խնածախի եւ Բալուշայի կեդրոնները եւ այնտեղ երգեց հոգեւոր երգեր: Այդ եկեղեցիները ինծի համար կարեւոր իմաստ ունին, որովհետեւ երբ 1989ի Ապրիլին առաջին անգամ ըլլալով Երեւանի երաժշտանոցի երգչախումբով դացած էինք ելոյթ ունենալու (այդ ելոյթները աւելի ցոյցեր էին եւ բողոքի արտայայտութիւններ եւ կը վերածուէին Արցախը Հայաստանի միացնելու ժողովրդային արտայայտութիւններու), Արցախի գիւղերը շրջած ատեն տեսնեք միեւնոցի վերածուած այդ երկու եկեղեցիները: Ուսանողներով մաքրեցինք զանոնք եւ հոն կատարեցինք հոգեւոր խմբերգներ: Ուրախ եմ ըսելու, որ տասնչորս տարի ետք, երբ կրկին այցելեցի այս եկեղեցիները, անոնք վերանորոգուած էին եւ ունէին իրենց քահանայները:

«Ա.». Ի՞նչ է, որ ձեզ մղեց այս տարի նախորդներէն աւելի շեշտը դնելու հայ հոգեւոր երաժշտութեան վրայ:

Զ. Բ. Հոգեւոր երգեցողութիւնը ամէնէն կարեւոր, նուիրական եւ հիմնական ոլորտն է երգչախումբի մը համար, մանաւանդ որ Շուշիի մէջ կը գործեն Մ. Ղազանչեցոյ եկեղեցին, Կանաչ Ժամը կամ Փոքրիկ եկեղեցին, որոնք պատարագներուն երգեցողութիւնները կը կատարեն «Վարանդա»ի անդամները: Անոնք կը սիրեն այս սեռը, որ հասու է իրենց: Այդ միջոցառումն մէջ անպայմանօրէն ուղեցի անդադարաւս զոգեւոր երաժշտութեան՝ հեռանկար ունենալով, որ շուրջ կարելի կը դառնայ ձայնագրութիւնը «Վարանդա»ի կատարմամբ հոգեւոր երաժշտութեան խտասալիկի մը:

«Ա.». Այս առումով գործնական քայլերու դիմա՞ծ էք:

Զ. Բ. Այս ծրագիրը իրականացնելու համար ի հարկէ պէտք ունինք հովանաւորներու, որոնք կարողանան ապահովել ձայնագրողներու եւ մասնագէտներու, ինչպէս նաեւ ձայնագրման գործիքներու փոխադրութիւնը Երեւանէն Շուշի:

«Ա.». Ինչպէս նախորդ տարիներէն տեղեկ եմք, «Վարանդա» եւ «Վարկաչ» երգչախումբերուն միջեւ ստեղծուած է բարեկամական սերտ կապ: Այս տարի երկու երգչախումբերուն միջեւ ի՞նչ բնութիւն գործակցութիւն տիրեց:

Զ. Բ. «Վարկաչ»ի այս տարուան վերջին ելոյթը, որ տեղի ունեցաւ «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ, երգչախումբին վարչութեան եւ անդամներուն կողմէ նուիրուեցաւ «Վարանդա»ի: Ըսեմ, որ այդ մէկը շատ գեղեցկօրէն ընկալուեցաւ այդտեղ: Անցեալ տարուան «Վարկաչ»ի նոր տարագները նուիրուեցան «Վարանդա»ի: Նամակագրական կապը կը շարունակուի տարիներէ ի վեր եւ արդէն վերածուած է ե-նամակի, ինչ որ կը թեթեւցնէ նամակատարի իմ բեռնը: Մեր պաշտօնական ելոյթին ինծի համար հաճելի անակնկալ էր, երբ «Վարանդա»ի անդամները «Վարկաչ»ին փոխանցելու համար ինծի յանձնեցին թանկարժէք յուշանուէր մը եւ իրենց երգերէն մէկը նուիրեցին ջոյր երգչախումբին:



Գրիգոր Սիւնիի «Շուշի» երգչախումբը նկարուած 2003ին

նար նոր երգերէ, յորինուած յատկապէս իրենց համար, ինչպէս նա՞եւ՝ դասական եւ հայկական դասական հոգեւոր երգերու շարքէ մը:

Այս տարի ունեցանք թիւով վեց ելոյթներ: Համերգաշարին բացումը կատարեցինք Հ.Յ.Դ. երիտասարդական եւ ուսանողական միութիւններու համահամահայկական Տրոյ բանակումին 350 մասնակիցներուն համար տրուած համերգով, որ տեղի ունեցաւ Մ. Ղազանչեցոյ եկեղեցւոյ առջեւ եւ մէջ: Դուրսը երգեցինք հայրենասիրական երգեր, իսկ ներսը՝ հոգեւոր երգեր: Մեր յաջորդ ելոյթը ունեցանք ուսուցիչներու համագումարին առիթով: Երգեցինք նաեւ զօրանոցի մէջ, զինուորներու համար: Բնականաբար պաշտօնական երկու ելոյթները եւս տեղի ունեցան Ստեփանակերտի եւ Շուշիի մէջ: Իսկ այլ ելոյթ մը ունեցանք Երեւանի «Սպեղանի» երգչախումբին ընկերակցութեամբ:

«Ա.». Հետաքրքրական է այլ երգչախումբերու հետ «Վարանդա»ի գործակցութիւնը: Կրնա՞ք յաւելել տեղեկութիւններ տալ այս մասին:

Զ. Բ. Այս տարի նշանակալից եղաւ մեր երգչախումբին կողմէ հիւրընկալուած Երեւանի մէջ գործող եւ գոհուած ազատամարտիկներու երեխաներէ կազմուած «Սպեղանի» երգչախումբին: Շուշիի եւ Ստեփանակերտի մէջ «Սպեղանի»ն տուաւ իր ելոյթները, որոնցմէ առաջ քանի մը երգով «Վարանդա»ն ողջունեց զայն: Ապա շատ խորհրդաւոր պահ մը ապրեցանք, երբ երկու երգչախումբերը Շուշիի Մ. Ղազանչեցոյ եկեղեցւոյ մէջ միասնաբար տուին հոգեւոր համերգ մը՝ երգելով հայկական հնագոյն հոգեւոր երաժշտութիւն: Ելոյթը աւարտեցաւ Կոմիտասի «Ազգային խմբերգ»ով:

Պէտք է ըսել, որ «Սպեղանի» երգչախումբը արգասիքն է մեծ աշխատանքի մը եւ արդէն իսկ նուաճած է արհեստավարժ բարձր որակ: Չայն կը նկատեմ Երեւանի մանկապատանեկան եւ երիտասարդական լուսաւոյն երգչախումբերէն մէկը, որ արժանի է ամէն ուշադրութեան եւ համերգային լայն շրջագայութեան: Որքան լաւ պիտի ըլլար, որ լիբանանահայութիւնը հիւրընկալէր զոհուած ազատամարտիկներու երեխաներէ կազմուած այս երգչախումբը, որուն ղեկավարն է Սարիւնէ Աֆթանտիլեան:

«Ա.». «Վարանդա»ի այս տարուան ելոյթները յատկանշական ի՞նչ նորութիւն ունեցին: Դեռատի երգիչները յաջողեցան՞ նուաճում մը իրագործել:

Զ. Բ. «Վարանդա» նուաճած է այն անհրաժեշտ որակը՝ կարենալ մատուցելու համար աքապելլա, այսինքն՝ առանց նուազակցութեան երգեցողութիւն: Այս մէկը յատկութիւն մըն է, գոր երգչախումբը ձեռք բերած է տարիներու փորձութեան իբրեւ արդիւնք՝ արհեստավարժութեան մակարդակ մը ունեւեցելով: Մեր համերգներուն ընթացքին մատուցեցինք Ներսէս Ծնորհայի, Գրիգոր Նարեկացիի եւ Կոմիտասի հոգեւոր ստեղծագործութիւններէն:

Այստեղ երախտագրութեամբ կ'ուզեմ նշել անունները նաեւ այն երաժիշտներուն (Արեգ Լուսինեան, Ստեփան Ծաքարեան, Ստեփան Պապաթորոսեան, Ռոպէրթ Պետրոսեան, Խաչատուր Մարտիրոսեան, Արմենուհի Կարապետեան) եւ բանաստեղծներուն (Նուրի Սահակեան, Սուրէն Մուրատեան, Գէորգ Կարապետեան), որոնք մեզի համար կը շարունակեն նոր ստեղծագործութիւններ յորինել եւ գրել: Եւ այս ձեռքով կը հարստանայ մանկապատանեկան երգարուեստը:

«Ա.». Ի՞նչ կարելի է ըսել մակարդակին մասին:

Զ. Բ. Յսուք սրտի, եւ Շուշիի կ'ըլլամ առաւելուց յոյժ երկու ամբարձու զօ՞րք: Ինչիւր րոպեարժան մակարդակ նուաճելու համար անհրաժեշտ է երկար ժամանակի վրայ փորձեր կատարել: Իմ հետապնդ-

ԼՕՍԻ «ՆԱՐՕՏ ԱՐՏԱԼՃԵԱՆ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿԻ ՓԱԿՈՒՄ



Լիբանանահայ Օգնութեան Խաչի Երջանային վարչութեան «Նարոտ Արտալճեան» մանկապատանեկան գրադարանի ամառնային եղանակին փակուած կատարուեցաւ հանդիսաւորութեամբ, Ծաքար, 27 Սեպտեմբերի կէսօրէ առաջ, գրադարանի սրահին մէջ, ի ներկայութեան ԼՕՍԻ Երջանային վարչութեան ատենապետուհիին, գրադարանի յանձնախումբի ընկերուհիներուն, «Ուրբոտ Վիթըն»ի հայկական բաժնիի պատասխանատու Մակի Տաուտի եւ մայրերու:

1993ին բացուած գրադարանը այս տարի բոլորեց իր տասնամեակը, ինչ որ առիթ տուաւ յաւելել արժեւորումով նշելու տասը տարիներու ընթացքին ձեռք բերուած յաջողութիւնները:

Գրադարանի վարիչ-ուսուցչուհի Ռուզաննա Ուլիկեանի բացման խօսքով սկսաւ յայտագիրի գործադրութիւնը: Ան շեշտեց գրադարանին մէջ կատարուած մանկավարժական թէ՛ հայ աշակերտին միտքն ու հոգին մշակող ուշադիր գործունէութեան վրայ, որով ամառ թէ՛ ձմեռ, իւրաքանչիւր եղանակ իրեն յատուկ ժամանակացոյցով կը գործադրուի կրթական ու դաստիարակչական ծրագիր՝ յատուցողական ցրուութեամբ, չորս տարբեր լեզուներու նկատմամբ ցուցաբերուած ուսուցողական աշխատանքներով: Ան յարգանք մատուցեց տասը տարիներու ընթացքին գրադարանին օգտակար հանդիսացած ԼՕՍԻ-ական ընկերուհիներուն, միջազգային կազմակերպութիւններուն, որոնք մասնակցեցան նկատմամբ յատուկ ուշադրութիւն ցուցաբերած են ուսման թէ՛ դաստիարակչական ոլորտներուն մէջ: Ռուլիկեան մասնաւոր կերպով շնորհակալութիւն յայտնեց ԼՕՍԻ գրադարանի յանձնախումբի անդամներուն, որոնք նուիրումով կը նպաստեն ԼՕՍԻ այս միաւորին ծաղկումին:

Գործադրուեցաւ պատշաճ յայտագիր՝ մասնակցութեամբ աշակերտական խումբերուն (ըստ տարիքի, 6 - 13 տարեկան): Այս խումբերը ամէն տարի կ'ունենան իրենց յատուկ մակդիր-անունը, հայ հերոսներու, նահատակներու կամ ազգային պարծանք դէմքերու եւ դէպքերու անուններով: Այս տարի խումբերը բաժնուր-ւած էին երկու մասի՝ «Սեւանայ» եւ «Վանայ» յորջորջումով:

Աշակերտները երգեցին, արտասանեցին, պարեցին ու ներկայացուցին թատերական կենդանի պատկերներ՝ Թ.Թումանեանի հեքիաթներէն եւ մեր ազգային կեանքէն քաղուած նիւթերով:

Յայտագիրի աւարտին խօսք տրուեցաւ ԼՕՍԻ Երջանային վարչութեան ատենապետուհի Սեդա Խտրչեանին, որ բարձր գնահատեց «Նարոտ Արտալճեան» մանկապատանեկան գրադարանի դերն ու օգուտը մեր ընկերային թէ՛ կրթական կեանքին մէջ: Ընկերուհի Ս. Խտրչեան ներկաներուն ուշադրութեան յանձնեց այս իրողութիւնը, թէ՛ ԼՕՍԻ բարեսիրական գործունէութեան կողքին, կ'իրագործէ նաեւ մշակութային աշխատանք:

Ինքնաբուխ արտայայտութիւն մը ունեցաւ երիտասարդ մայր մը՝ տիկին Ազնի Մազաքեան, որ շնորհակալութեան ու շնորհաւորական խօսքեր ներկայացուց սրտանց մաղթելով, որ Գործը շարունակուի յանուն մեր երեխաներուն դաստիարակութեան, ապա արտասանեց Յովհաննէս Թումանեանի քերթողական քնարերգութեանէն հատուած մը.

«Մենք ամենքս հիւր ենք կեանքում
Մեր ծննդեան փուն օրիք,
Եւ թրով գալիս, անց ենք կեցում,
Էս անցաւոր աշխարհից:

.....
Մահը մերն է, մենք՝ մահիցը,
Մարդուն գործն է միշտ անմահն»:

Յիրաւի, մնալունը մարդակերտումի աշխատանքն է այս պարագային, որ իր խոր հետքն ու զրոյժը պիտի ձգէ մեր մանուկներուն հոգիներուն մէջ:

Փակման խօսքը վիճակուեցաւ Ծահանդուխտին, որ իր կարգին ջերմօրէն գնահատեց ԼՕՍԻ բարեսիրական աշխատանքին կողքին իրագործուած մշակութային այս ձեռնարկը, կոչ ըրաւ մայրերուն իրենց գաւակները յանձնելու ազգային ու հայկական վարժարաններու, որպէսզի անոնք չտարանան օտար ու խորթ շրջանակներու մէջ:

Հուսկ՝ կատարուեցաւ տասնամեակի շնորհաւորութեան կարկանդակի հատումը: Ներկաները հիւրասիրուեցան եւ գոհունակութեամբ մեկնեցան գրադարանէն շնորհակալութիւն յայտնելով վարիչ-պատասխանատու ուսուցչուհի եւ դաստիարակ Ռուզաննա Ուլիկեանին եւ յանձնախումբի անդամներուն:

ԼՈՒՐԵՐ ԸԱՅԱԾԵՍԱՐԿԵՆ - ԼՈՒՐԵՐ ԸԱՅԱԾԵՍԱՐԿԵՆ - ԼՈՒՐԵՐ ԸԱՅԱԾԵՍԱՐԿԵՆ - ԼՈՒՐԵՐ ԸԱՅԱԾԵՍԱՐԿԵՆ - ԼՈՒՐԵՐ ԸԱՅԱԾԵՍԱՐԿԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՉԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՐԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՒ ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆԵԱՆ ԳՐԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Հայաստանի Ազգային գրադարանը վերջին շրջանին իր կապերը աշխուժացրեցած է Հայաստանի մարզային գրադարաններուն հետ: Գրադարանի գիրքերու փոխանակութեան բաժնին (այդ տեղ կայ շուրջ 15 հազար հատոր) նուիրատուութիւններ կատարուած են Գլխավորի կեդրոնական, Չարեհնցաւանի քաղաքային եւ Արարատի մարզային գրադարաններուն՝ համապատասխանաբար 30, 510 եւ 80 գիրք:

Օգոստոսին 388 գիրք նուիրուած է Ախալքալաքի եւ Նինոծմինտայի գրադարաններուն: Նուիրատուութիւնը կ'արժեւորուի մասնաւորապէս, որ տարրի մը առաջ ամբողջութեամբ այրուած էր Ախալքալաքի գրադարանի առանձին մասնաշէնքին մէջ գտնուող մասնակազմի գրականութեան բաժնին:

Հայաստանի Ազգային գրադարանի հասարակական կապերու եւ միջոցառումներու բաժնի տուեալներով, վերջին մէկ տարուան ընթացքին գիրքերու փոխանակութեան բաժնում ընթացող կապ պահած է 24 երկիրներու, որոնց շարքին՝ Միացեալ Նահանգներու, Գերմանիոյ, Ռուսիոյ եւ Ֆրանսայի մէջ գտնուող 60 կառույցներու եւ անհատներու հետ: Ամէնէն շատ գիրքերու փոխանակում եւ նուիրատուութիւն կազմակերպած հաստատութիւններէն են Միացեալ Նահանգներու Քոնկրէսի եւ Իրանի Ազգային գրադարանները:

ՎԱՆԱՉՈՐԻ ԶՈՎՀԱՆՆԵՍ ԱՐԷԼԵԱՆԻ ԱՆՈՒՄ ԹԱՏՐՈՆԻ ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒՄ

Վանաձորի մէջ արդէն իսկ սկսած են Յովհաննէս Աբէյեանի անուան Պետական Տրամաթիքական թատրոնի շէնքին վերանորոգման աշխատանքները, զորս կը նախատեսուի աւարտել մինչեւ տարեկիրը: Ծրագիրի ֆինանսաւորման համար Հայաստանի պետական պիւտնէէն յատկացուած է 30 միլիոն դրամ:

Կը նախատեսուի կառուցել թատրոնի կաթսայատունը, նորոգել ջրամատակարարման ցանցը, բարեկարգել դահլիճը եւ սպասման սրահը: Ըստ թատրոնի տնօրէնութեան, սակայն, դահլիճի աթոռներուն, բեմական դոյքին եւ թերթի սարքերուն ձեռքբերման համար միջոցներ նախատեսուած չեն: Թատրոնի տնօրէնութեան կողմէ ներկայացուած է շուրջ 40 միլիոն դրամի նոր նախահաշիճ՝ նշեալ խնդիրները լուծելու համար: Աջակցութեան պատրաստակամութիւն յայտնած է նաեւ Վանաձորի քաղաքապետութիւնը, որ այս ծրագիրին համար իր պիւտնէէն պիտի յատկացնէ 3 միլիոն դրամ:

«ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԵՂԵԿԱՏՈՒԿԱՆ ԱՐՀԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ» ՆԻԻԹՈՎ ՄԻԱԶՊԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

22 սեպտեմբերին Երեւանի մէջ իր աշխատանքներուն սկսաւ «Համակարգչային գիտութիւն եւ տեղեկատուական արհեստագիտութիւն» նիւթով միջազգային 4րդ գիտաժողովը, որ նուիրուած էր Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի 60ամեակին: Գիտաժողովը նպատակ ունէր արձակելու համակարգչային գիտութեան եւ տեղեկատուական արհեստագիտութեան մարզին մէջ գիտական եւ արհեստագիտական տեղեկատուութեան փոխանակման:

Գիտաժողովին կը մասնակցէին շուրջ 250 գիտնականներ, որոնցմէ 25ը եկած էին արտերկրէն, ի մասնաւորի՝ Միացեալ Նահանգներէն, Ֆրանսայէն, Պեմբուրգէն, Իտալիայէն, Հունգարիայէն, Գերմանիայէն, Ռուսիայէն, Ուրուգուայէն եւ Իրանէն:

Գիտաժողովի շրջանակներուն մէջ տեղի ունեցան երկու կլոր սեղաններ, որոնցմէ մէկը նուիրուած էր միջազգային գիտական համագործակցութեան, մասնաւորապէս ԻՆՊՍՍ ընկերակցութեան ծրագիրներուն եւ դրամաշրջանառութեան տրամադրման հարցերուն: Միւս կլոր սեղանը նուիրուած էր Հայաստանի մէջ տեղեկատուական արհեստագիտութեան զարգացման միջոցներու քննարկման:

Յայտնվելով, որ իւրաքանչիւր գիտաժողովէ ետք կը հնարակուին գեկոյցներու ժողովածուներ, որոնց մէջ կ'ամփոփուին նախորդ երկու տարիներու այս ոլորտի աշխատանքը եւ ձեռքբերումները ինչպէս Հայաստանի, նոյնպէս ալ արտերկրի մէջ:

ԵՐԵՒԱՆԻ ՀԻՄՆԱԳՐՈՒԹԵԱՆ 2785ԱՄԵԿԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՏՈՒԹԻՒՆ

Երեւանի քաղաքապետարանի մշակոյթի, երիտասարդութեան հարցերու եւ մարմնակրթութեան վարչութեան պետ Արման Սահակեան վերջերս ներկայացրեցած է յառաջիկային Երեւանի մէջ տեղի ունենալիք ձեռնարկները: Ըստ Ա. Սահակեանի, այս առումը յազգեցած պիտի ըլլայ տնայնակատուութիւններու: Այսպէս, 4 Հոկտեմբերին «Հրազդան» մարզադաշտին մէջ 44րդ անգամ ըլլալով տեղի պիտի ունենայ «Ոսկի առաջնութիւն» մարզային մրցումները: 10 - 12 Հոկտեմբեր պիտի կազմակերպուի Երեւանի 2785ամեակին նուիրուած «Տրեբուանի-Երեւանի» տնայնակատուութիւնը:

Ա. Սահակեան ըսաւ, որ այդ զրբերուն Երեւանի պիտի հիւրընկալէ բազմաթիւ գրօսաշրջիկներ եւ սփիւռքահայեր: Մոսկուայի քաղաքապետի նա-

խաձեռնութեամբ տօնակատարութեան պիտի մասնակցին նաեւ Ռուսիոյ մշակոյթի գործիչները:

Այս առիթով Երեւանի մէջ տեղի պիտի ունենայ քաղաքին նուիրուած շարադրական մրցում մը, որուն արդիւնքները պիտի յայտարարուին Հոկտեմբերին: Նոյն շրջափոխին մէջ Երեւանի պատմութեան թանգարանին համագործակցութեամբ պիտի կազմակերպուի «Երեւանը հայ կերպարուեստին մէջ» ցուցահանդէսը: «Երեւանը երգերուն մէջ» համերգին պիտի մասնակցին հայրենի երգիչները, իսկ «Հայրթ» Մշակութային կեդրոնին մէջ տեղի պիտի ունենայ «Երեւանը իմ աչքերով» լուսանկարչական ցուցահանդէսը:

Ա. Սահակեան ըսաւ, որ շատ կարեւոր է ձեռնարկներուն մէջ ներգրաւել քաղաքացիները: Տօնին նուիրուած շքերթին պիտի մասնակցի 2 - 3 հազար հոգի, իսկ տօնակատարութիւնները պիտի աւարտին Հանրապետութեան հրապարակին վրայ՝ հրավառութեամբ:

ՊՏՈՒՂԻ ԱՆՆԱԽՆՆԵՐԸ ԲԵՐՔ ԼՈՒԻՍ ՄԱՐԶԻՆ ՄԵՉ

Հակառակ անոր որ Լուսի մարզին մէջ պտուղի բերքահաւաքը տակաւին ընթացքի մէջ է, սակայն կը թուի, թէ այս տարի բերքը աննախընթաց կերպով բարձր է, որովհետեւ կը նախատեսուի, որ հաւաքուի հազար թոնէ աւելի պտուղ: Հակառակ եղանակային շատ անբարենպաստ պայմաններուն, նաեւ բանջարեղէնի բաւարար բերք հաւաքուած է: Եւրոպական երկիրներէն ներածուած, բարձրորակ սերմերուն շնորհիւ գետնախնձորի ցանքերէն կը հաւաքուի բարձրորակ բերք:

Տարեկիզբի կարկտահարութեան եւ հեղեղներէն տուժած Լուսի գիւղացիներուն օգնելու համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան մէջ Լուսի մարզ ներածուած է եւ մարզի 23 գիւղերուն բաշխուած է շուրջ 150 թոն ցորենի որակաւոր սերմ: Կը սպասուի նոյնպէս ներածել 200 թոն սերմ, որ պիտի բաշխուի աղէտներէն աւելի տուժած գիւղերուն:

ԳԵՐՄԱՆԻԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԸ ՏՐԱՄԱԳՐԸ 4 ՄԵԼԻՈՆ ԵՒՐՈՅԻ ԳՐԱՄԱՇՆՈՐԸ

Վերջերս Երեւանի մէջ ստորագրուեցաւ «Վարկերու երաշխեքային հիմնադրամ» ծրագրի ֆինանսաւորման համաձայնագիր, ըստ որուն, Գերմանիան վերականգնման վարկերու դրամատուներ Հայաստանի կառավարութեան տրամադրեց 4 միլիոն 345 հազար 980 եւրօ դրամահարկ:

Համաձայնագիրը ստորագրեցին Հայաստանի Ելեւմուտքի եւ տնտեսութեան նախարար Վարդան իսախանեան եւ գերմանական դրամատան պատասխանատուներէն Քլաուս Կլաուպիթ: Ծրագրեր կազմուած էր այս տարուան Յունուարին, Գերմանիոյ եւ Հայաստանի կառավարութիւններուն միջեւ, ֆինանսական համագործակցութեան համաձայնագրին հիման վրայ:

Տրամադրուած դրամահարկէն 3 միլիոն 834 հազար 689 եւրօ պիտի յատկացուի «Հարաւային Կովկաս-Հայաստան շրջանային վարկային երաշխեքներու հիմնադրամ» ծրագրի իրականացման համար, իսկ 511 հազար 291 եւրօ՝ վարկային երաշխեքներու հիմնադրամ ծրագրի իրականացման եւ սպասարկման համար անհրաժեշտ յարակից միջոցառումներուն համար:

Ըստ Ք. Կլաուպիթի, այս ծրագրին նպատակը Հայաստանի ֆինանսական մարզին ուժեղացումն է: «Վարկային երաշխեքներու հիմնադրամ» ծրագրով երաշխեքներ պիտի տրամադրուին Հայաստանի սեփական առեւտրական դրամատուներուն՝ կարելիութիւն ընձեռելով փոքր եւ միջին ձեռնարկութիւններուն ուղղուած վարկային ծրագիրներու վերաֆինանսաւորման նպատակով վարկային միջոցներ ապահովել միջազգային ֆինանսական հաստատութիւններէն:

ՅՈՐԴԱՆԿ ԿՈՆՍՏԱՆՊՈՒՆ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՍՏԵՂՆՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԸՆԹԵՐԳ

Հոկտեմբեր ամսուան սկիզբը Երեւանի Արամ իսախանեանի տուն-թանգարանին մէջ տեղի պիտի ունենայ հանդիպում ամերիկացի երեւանցի յորինող Կոնստանդին Պետրոսեանի հետ: Հանդիպումին ընթացքին պիտի ներկայացուին նաեւ յորինողին գործիքային եւ երգչախմբային տեղագործութիւնները:

Համերգի նախաձեռնող եւ «Հայկական երաժշտական Համաժողով» կազմակերպութեան նախագահ յորինող Էլեոն Զաւենցեան ըսաւ, որ համերգը կ'ընդգրկէ հեղինակին հին եւ նոր ստեղծագործութիւնները, զորս պիտի կատարեն Հայաստանի ճանաչուած խումբերն ու մենակատարները:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱՇՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԵՐԳ՝ ՓՐՈՎԻՏՆԵՆՍԻ ՄԵՉ

Միացեալ Նահանգներու Ռոտ Ալլընտ նահանգի կեդրոն Փրովիտըն քաղաքի Մշակութային կեդրոնին մէջ վերջերս տեղի ունեցած է մեծ համերգ՝ նուիրուած Հայաստանի անկախութեան օրուան եւ Ս. Էլմիսաժինի 1700ամեակին:

Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ հայկական եկեղեցւոյ մշակութային յանձնախումբի կազմակերպութեամբ տեղի ունեցած համերգին ներկայ էին Ռոտ Ալլընտ նահանգի պաշտօնատար անձ-

նակորութիւնները, հոգեւորականներ եւ զաղութի ներկայացուցիչներ:

Համերգին ընթացքին ելոյթ ունեցած է Ռոտ Ալլընտի հայկական երգչախումբը՝ յորինող Կոնստանդին Պետրոսեանի ղեկավարութեամբ, ինչպէս նաեւ ելոյթ ունեցած են երգիչներ Վաղարշա Օհանեան եւ Անուշ Պերքի, Նիւ Եորքէն: Համերգին ընթացքին ներկայացած են հոգեւոր եւ հայրենասիրական երգեր:

ՀՕՍԵ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՄԸ ՄԱՍՆԱԿՅԵՅԱԻ ՄԱԿԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՈՒԹԵԱՆ ԲԱՎՄԱՏՈՒՄ ԵՒ ԺՈՂՈՎՆ

Ամերիկայի Միացեալ Նահանգներէն եւ Քալիֆորնիայէն ՀՕՍԻ աւելի քան 30 անդամներ միութեան կեդրոնական վարչութեան ատենապետ Մարո Մինասեանին հետ մասնակցեցան ՄԱԿի ոչ կառավարական կազմակերպութիւններու 56րդ տարեկան ժողովին, որ տեղի ունեցաւ 8 - 10 Սեպտեմբեր, Նիւ Եորքի ՄԱԿի կեդրոնատեղիին մէջ:

Ժողովին ղեկավար նիւթն էր «Մարդկային ապահովութիւնն ու արժանապատուութիւնը»:

Ժողովը կազմակերպուած էր ՄԱԿի Հանրային տեղեկատուութեան բաժանմունքին կողմէ: Աշխարհի գանազան կողմերէն աւելի քան 2000 հոգի մասնակցեցաւ միջազգային այս ժողովին՝ քննելու համար մարդկային ապահովութեան եւ արժանապատուութեան վերաբերող հարցեր:

Երեքշաբթի, 9 Սեպտեմբերին, ՀՕՍԵ ներկայացուց կէսօրեայ աշխատանքային մը, որուն նիւթն էր՝ «Մանրատնտեսի տկարութիւններ ունեցող կիներուն ու անհատներուն համար նիւթական ապահովութիւն տրամադրել»:

Այս աշխատանքային նիստին մասնակցեցաւ աւելի քան 120 հոգի՝ քննելու համար մանրատնտեսական ծրագրերուն միջոցով տեղական տնտեսութիւնները ամրապնդելու միջոցները: Աշխատանքային նիստի ընթացքին խօսք առին համաշխարհային գանազան ընկերակցութիւններ ներկայացնող գանազան եւ ՄԱԿի մօտ ՀՕՍԻ ներկայացուցիչներէն Հարիթ Քազարեան:

Յիշենք, թէ ներկայիս ՀՕՍԵ խորհրդատուի կարգավիճակ ունի ՄԱԿի Տնտեսական եւ Ընկերային խորհուրդին (ECOSOC) մէջ եւ աւելի քան տասնամեակէ մը ի վեր արժամէ Հանրային տեղեկատուութեան բաժանմունքին: ՀՕՍԵ ՄԱԿի մօտ ունի ութ մնայուն ներկայացուցիչներ՝ ներառեալ ՀՕՍԻ կեդր. վարչութեան ատենապետը:

Մարո Մինասեանը ՄԱԿի մօտ ՀՕՍԻ ներկայացուցիչներ Սթեֆընի Մեսրոպեան եւ Հարիթ Քազարեան Նիւ Եորքի մէջ կանոնաւոր կերպով կը մասնակցին ժողովներուն եւ կարեւոր դերակատարութիւն ստանձնած էին ժողովի ծրագրումը յանձնախումբին մէջ: Սթեֆընի Մեսրոպեան կը նախագահէր ներգործուող տեղեկատուութեան յանձնախումբին, որ ունի իր կաթէլը, որուն միջոցով վերոնշեալ ժողովը ՄԱԿի կեդրոնատեղիէն դուրս ելելով՝ կը դառնար ըրորդին սեփականութիւնը: Հարիթ Քազարեան համախառնապէս էր կազմակերպուած կէսօրեայ 30 աշխատանքային նիստերուն, որոնք տեղի ունեցան ժողովի երեք օրերուն ընթացքին:

ՉՈՒՎԱԾԻՈՅ ԻՆՔՆԱՎԱՐ ԸՆԴՈՒՊԵՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԳՊՐՈՅ ԶԵՊՈՔԱՆՈՒՄԻ ՄԵՉ

Ռուսիոյ մէջ գտնուող Չուվաշիոյ ինքնավար Հանրապետութեան հայ համայնքին նախաձեռնութեամբ Չեպոքսարիի տեղական դպրոցներէն մէկուն մէջ վերջերս բացուած կատարուած է հայկական կիրակնօրեայ դպրոցի մը, ուր պիտի յաճախեն 70է աւելի հայ պատանիներ եւ աղջիկներ:

Հարաւային Ռուսիոյ հայերու «Երկրամաս» թերթը կը տեղեկացնէ, թէ դպրոցի բացման արարողութեան մասնակցած են Չուվաշիոյ մշակութի եւ ազգութիւններու հարցերու փոխնախարար Մ. Քրասնով, Չուվաշիոյ ժողովրդական բանաստեղծ Մ. Եուլմա, Չուվաշիոյ Գրողներու Միութեան փոխ նախագահ Ռոզա Շելեփի:

«Չուվաշիոյ Հայկական Հանրապետական Համայնք» հասարակական կազմակերպութիւնը հիմնուած է 1998 թուականի Ապրիլին: Կազմակերպութիւնը աշխուժ կերպով կը մասնակցի Չուվաշիոյ ազգային օրուան նուիրուած ձեռնարկներուն եւ այլ նախաձեռնութիւններուն: Նաեւ կը կազմակերպուին հայկական ազգային տօներ եւ համերգներ:

1800 ՍՓԻՒՌԱՔԱՅՈՒՄՆԵՐՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՍՏԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԵՉ

Հայաստանի 14 բարձրագոյն ուսումնական հաստատութիւններու եւ ուսումնարաններու մէջ (ղլխաւորաբար՝ արուեստի եւ բժշկական) ներկայ կ'ուսանին աշխարհի 27 երկիրներէ հեկա մաւելի քան 1800 սփիւռքահայ ուսանողներ: Ըստ Հայաստանի կրթութեան եւ դիտութեան նախարարութեան Սփիւռքի բաժնի պետ Հրաթ Թադեոսեանի, ուսանողներուն գերակշիռ մասը կը ուսնի Վրաստանէն, Իրանէն, Սուրիայէն եւ Ռուսիայէն:

Համալսարաններուն մէջ սփիւռքահայերու

համար Հայաստանի կառավարութեան յատկացուած 70 տեղերուն համար այս տարի ստացուած է 311 դիմում: Պետական պատուէրի տեղերը բաշխուած են հետեւեալ կերպով. 56ը տրուած է Վրաստանէն դիմողներուն, ինչ որ պայմանաւորուած է անով, որ այնտեղ կը գործեն 156 հայկական հանրակրթական դպրոցներ, եւ մանկարժարժական մարզութի պատրաստութեան հարցով նախապատուութիւնը կը տրուի Վրաստանէն եկող դիմողներուն: Եթէ տեղ յատկացուած է Իրանի, երեք տեղ՝ Ռուսիոյ, երկու տեղ՝ Լիբանանի եւ մէկական տեղ՝ Թուրքմենիստանի եւ Սուրիոյ:

Ըստ Հ. Թադեոսեանի, նախարարութիւնը իր ուշադրութիւնը կեդրոնացրեցած է Սփիւռքի դպրոցներուն համար մանկավարժական քաղաքներու նպատակային պատրաստութեան գործընթացին վրայ: Սակայն, անոր հաւաստումով, անհրաժեշտ է վերահսկել այս գործընթացը, որպէսզի մանկավարժի մասնագիտութիւն ստացած ուսանողները չմնան Հայաստան, այլ վերադառնան իրենց բնակավայրերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՎԵՐԱՀԱՅՈՒՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՊԵՏԻ ԹՎՈՒՐ ՊԱՇՏՕՆԻՆ ՀԱՄԱՐ ՄՐՅՈՒՄ

Հայաստանի նախագահի աշխատակազմի տնտեսագիտական վարչութեան պետի եւ վերահսկողական ծառայութեան պետի թափուր պաշտօններուն համար մրցումներ տեղի պիտի ունենան 24 եւ 28 Հոկտեմբերին: Փաստաթուղթերուն ընդունման վերջին ժամկէտը 9 Հոկտեմբերին է:

Հայաստանի քաղաքացիական ծառայութեան օրէնքով, այս պաշտօններուն կրնան յաւակնել բարձրագոյն կրթութիւն, վերջին հինգ տարուան ընթացքին քաղաքական կամ հայեցողական պաշտօնի վրայ առնուազն երկու տարի կամ կառավարման մարզին մէջ առնուազն հինգ տարի աշխատանքային փորձառութիւն ունեցող անձեր:

ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻԱ «ՀՈՎԵՐ» ԵՐԳՉԱՆՈՒՄԻ ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՇՐՋԱՎԱՅՈՒԹԻՒՆԸ

«Հովեր» սենեկային երգչախումբը, «Պրիթիշ էրուէյզ» եւ անոր գործընկեր «Պրիթիշ Մետիթլըն»-ը իրուէյզ ընկերութիւններուն հովանաւորութեամբ, 10 սեպտեմբեր համերգային այցելութիւն տուած է Մեծ Բրիտանիա:

Արդէն յայն Դանաչու մի հասած եւ միջազգային շարք մը մրցանակներ ստացան 25 հոգի ինքն երգչախումբը համերգներ տուած է Կլասթոն, Օքսֆորտ, Քէյմպրիճ, Էսթիպուրկ եւ Լոնտոն քաղաքներուն մէջ: Տաճարներու, մատուցներու եւ համալսարաններու սրահներու մէջ «Հովեր» ներկայացուցած է հայկական եւ արեւմտեան հոգեւոր, դասական ու ժողովրդական երաժշտական ստեղծագործութիւններ:

«Համերգաշարը կը ծառայէ հայկական երաժշտութիւնը բր

